




15874

Q. Spitz

hus
Urus hueren



~~3803~~
~~9-81~~

Հ 6 « Խ Ո Զ Մ Ւ Կ » - Ի Գ Ր Ա Գ Ա Ր Ա Կ Հ 6

2803

գ. Զթենց

ՀԱՅ

ՍՊԱՅԻ ՀԱՄԱՐ

2001

ԵՐԵՒԱՆ
ՀԱՅՈՒ Տպարան
1920

2803

2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐՈՆԱԿԱՐԱՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Հայ սպայի համար	1
2. Ընդհանուր պահանջներ	6
3. Ռազմական յատկութիւններ	11
4. Հայրենասիրութիւն	13
5. Սպայի կամքի գաստիարակութիւնը .	17
6. Վերջաբան	29

92811-41



844-2002

ՀԱՅ ՍՊԱՅԻ ՀԱՄԱՐ

I

Բարեկամ գու Հայաստանի բանակի սպան ես.

Գու Հայ ժողովրդի ծնունդն ես. գու ծանօթ ես Հայերիս կրած տանջանքներին. գու քո կաշւե վրա զգացել ես մեր ժողովրդի վերջին տարիների անհուն տառապանքները:

Գու գիտես թէ ինչ է քոան ժամեայ բանւորական օրը, ինչ է ազգատութիւնը և սռվը... ըստ աշքով ես տեսեմ, թէ ինչպէս սովամոհ են եղել քո սիրելի ները, գեղերի պակասութիւնից. չեն կարողացե բժշկւել քո մտերիմները...

Գու զինւոր ես եղել զեռ ռուս ցարական ոն ժիմի ժամանակ և յիշում ես, թէ այն ժամանակ զինւորական ծառայութիւնը ինչպէս ստորացնում էր քո մարդկային արժանապատճենիւնը, ինչպէս շարժարում էին քեզ, հայհայում և արհամարհում էին քո անհատական ծագումը՝ քո ազգութիւնը. և ինչպէս ստիպում էին քեզ կռւել հէնց քս ցեզակիցների զէմ, սպանել քո մտերիմներին և բարեկամներին...

Բայց դու ասացիր՝ «բաւական է»:

Եւ մի կողմ շպրտեցիր քո ոտներից ու ձեռներից՝ ունենացարի դրած կապանքները, դու հայրենիքն աղամատեցիր նրանից և սկիզբ գրիր ԱՄԱՍԻԿԱՆ ԱՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱ

ԱՐՄԵՆԻԱ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱ

Դու քո հաւատարիմ զին: որների հետ մեն մեծակ տէր կանգնեցիր քո պապական ժառանգութեանը քո հողին և պաշտպանեցիր նրան անցած երեք տարւայ ընթացքում: —

Եւ մինչև հիմա էլ պաշտպանում ես առանց աչք փակելու: .

Մեր երկրի ամեն կողմելից շար թշնամիները ատամները սրած, ապահ աշքերով, քո շարժումներին են նայում, աշխատում են այնպիսի ժամանակ զբանել երբ դու կը թերանաս կամ կը հեռանաս քո գիրքերից, որպէսողի յարձակեն և խլեն քո հողոնորից սարկացնեն քեզ ու քո ցեղակիցներին... .

Դու էիր, որ փոշիների մեջից զուրս հանեցիր հայ ազգի անկախ պետականութեան ջահը, վառեցիր նրան և քո ձիռքում բարձը բռնած՝ լուսաւ: բռնմ ես քո ցիշսեցների ճանապարհը ջերմութիւն ես տալիս նրանց կեանքին, հրապոյրով ես զսրդարում նրանց զոյամարտը... .

Հայ ցեղի արիւնաբռու թշնամիները ամեն կերպ աշխատում են խլել քո ձեռքից այդ ջահը, որպէսողի մարեն և ոչնչացնեն այդ, որովհետեւ դա վակում է նրանց ախորժակը, սահման է զնում նրանց ադահութեանը, սանձ է զնում նրանց բերանին և թոյլ չետալիս նրանց՝ քեզ նորից ստրուկ դարձնելու: .

Ահա թէ ինչու զու պէտք է արթուն հսկես և ամուր բռնես քո ձեռքում հայ ժողովրդի անկախ դայութեան ջահը, ահա թէ ինչու պէտք է կռւես և հարւածես թշնամուն, երբ նա յարձակեւում է քո վրայ:

Ինչ էլ որ պատահի դու պէտք է կանգուն մընաս և քո ձեռքից վայր չը պէտք է ձգես անկախութեան ջահը.

Դու պէտք է քո ձեռքերում պահես այդ ջահը մինչև այն ժամանակ, երբ քո թշնամիները կընտելանան այդ ջահի լոյսին, կը հաշտւեն այն մտքե հետ, որ հայն էլ անկախ ժողովութղ է և իրաւունք ունի, ապրելու եր բնաշխարհի երկրում, ինչպէս և երենք, այդ թշնամիները ապրում են կըենց երկրներում:

Դու մտել ես հայ զօրքի շարքերը, որպէսզի պաշտպանես Հայրենիքը քո կեանքի գնով:

Դու իհարկէ կարող ես հերոսաբար և պատւով մեռնել:

Բայց քիչ է մեռնելու պատրաստակամութիւնը. պէտք է գիտենալ և յաղթելու ձեզ:

Որպէսզի յաղթելու ձեզ իմանաս զու պէտք է գիտենաս, թէ ինչպէս են կռւում:

Դսա համար դու պէտք է սովորես առջմական արևեստը... .

Փորձւած հին ռազմիկներից զու պէտք է փոխառնես բոլոր ռազմական սովորութիւնները և գիտութիւնը:

Դու պէտք է կարողանաս զեկավարել քիզ յանձնւած կենուորներին և այդ ոչ միայն խօսքերով, այլ և գործով զու պէտք ցոյց տաս, որ ետ չես մոռմ հին սպաներից և կարողանում ես զինուորների միջոցով քո կամքը թելադրել թշնամուն:

Այդպիսով զու պէտք է ապացուցես, որ զինուորական արւեստը մի խօսմք ընտրալեների սեփականութիւն չէ, որ զու էլ կարող ես ըմբռնել պատերազմական գործողութիւնների զեկավարման գաղտնիքները և նրանութիւնները:

Քո բոլոր ընդունակութիւններդ, կամքդ, ուշքըդ ու մետք պէտք է կենտրոնացնես այն բանի

վրայ, թէ ինչպէս ամենից լաւ կատարելու գործւած ձեռվլ գործազրես ռազմագիտական արևեստը՝ քեզ զոհեր տալով մեծ արդիւքներ ստանալ, թշնամուն ոչնչացնել:

Դու աւելի գիտակից և զարգացած ես, բանթէ քեզ յանձնւած զինւորները, այդ պատճառով առաջ դու պէտք է սովորես ռազմագիտութիւնը և ապա պիտի սովորեցնես քո զինւորներին:

Այդ նշանակում է, որ դու պատասխանատուես ոչ միայն անձնապէս քո արարքների համար, այլև և այն բոլոր մարդկանց համար, որոնք յանձնւած չն քեզ զեկավարելու, դու պատասխանատու ես քո ինւորների համար:

Դու պատասխանատու ես նրանց կեանքե և ըստ կատարած գործի յաջողութեան համար:

Միշտ յեշելով քո վրայ ծանրացած այս պատասխանատութեան մասին, դու դէպի գործը պէտք է վերաբերեն ամենայն լրջութեամբ, և ոչ մի ժամանակ չը պէտք է մտածես, թէ դու արդէն բաւական գիտես և բաւական գործ կատարել ես:

Միշտ և ամեն աեղ դու պէտք է սովորես, նոր աեղեկութիւններով հարստացնես քո զիտութիւնը և միշտ էլ պէտք է հազորդակից անես քեզ յանձնւած զինւորներին այդ գիտութեանը:

Այսօր կռիւ է ուեղի ունենում, վել ջին և վրձնական կռիւ ը, որ մզում է մեր անկախութեան և մեր ժողովրդի ֆիզիքական զոյութեան պահպահման համար:

Կռիւ է աեղի ունենում խարդախ, դաժան և նենդ թշնամու դէմ, և դու պէտք է վերջ տաս իսազազ ժոմանակւայ հանգստիդ և դանդաղ գործունէութեանը:

Սպայի համար գոյութիւն չունին երեք ութերը (8 ժամ աշխատանք, 8 ժամ հանգիստ և 8 ժամ գուն). դրանք խողաղ ժամանակւայ հանգիստ կեանքի որոնումներ են. սպան օրւայ մէջ պէտք է 16 ժամ յատկացնէ իր զինւորների գաստիքակութեան, 4 ժամ իր ինքնազմաքացման և ինքնակատարելագործման, ինչ որ տակը միաց՝ ընկ և հանգստի...

Դու կը հանգստանաս այն ժամանակ, երբ կը յաղթես. իսկ մինչև այդ քեզ համար հանգիստ գոյութիւն չափետք է ունենայ, որովհետեւ դու պաշտպանում ես մի մեծ գործ՝ աղատագրւած Հայրենիքի անկախութիւնը,

Հայ բանակի սպանակ,

Յիշիք, որ քո վրայ է ընկած Հայրենիքի պաշտպանութեան և յաջողութեան ամբողջ պատասխանատութիւնը:

Իմացիք, որ եթէ Հայրենիքի պաշտպանութիւնը. վիժեց մեղաւորը գու կլինե՛ս:

Մի մոռանայ, որ անյաջութեան գէպքում դու նորից կրնկնես նեղութեան, ազգս տութեան, ստրկութեան և գերսութեան մէջ, եթէ թշնամիդ «բարի» գտնւի և իսկոյն ևեթ քեզ-և քո սիրելիներին ըը մորթոտէ...:

Յիշեր այս բոլորը և կարողացեր կռւել, իմաստեր քո զինւորներին զեկավարել, գիտցիր հըամայել և յաղթել:

Ցոյց տուր, որ հայ ժողովուրդը ունի ստրկութիւնը և մահը արհամարհուղ քաջեր:

բացատրես և ցոյց տաս պիտացածդ զինորւոր ներիդ:

Տառայութեանդ մէջ համբերող եղեր և յամառօքէն բացատրիր, ցոյց տուր, հասկացրու, և մինչեւ որ չը համոզւես, որ զո զինուորներդ ըմբռնել և իւրացրել են առածդ—մի հեռանայ:

Այնպիսի ընթացք տուր ըո տւած դասերին, որ ամեն վայրկեան կարողանառ ասել.—«Ես չեմ պահանջում անկարելին. ես միայն պահանջում եմ ձեզանից, որ գուք գիտենաք և կտարէք այն, ինչ որ գիտեմ և կտարում եմ ես. անհնարին բան չը կայսուեց»:

2. Ապայից պահանջում է մասմած վերաբերելով դեպի իրեն ենրակալ զինուորները.

Թու ստորագրեալների հետ ծառայութիւնից գուրս գու ընկեր ես, իսկ ծառայութիւն ժամանակ—իշխանաւոր, որ անշեղ կերպով պահանջում է իր կարգադրութիւնների և հրամանների ունիոս կատարումը:

Դու պէտք է յիշես, որ իշխանաւորի ամենալաւ յատկութիւնն է—արդարութիւնը. այդ յատկութիւնը ունեցիր և ծառայութեան մէջ միատեսակ իրաւագանանջ եղիր դէպի ըոլոր զին ւրբներգ:

Զր կարելի կողմնապահութեամբ զինուորների մէջ ջոկողութիւն գցել, մէկին երես տալ և խաթսին չը դիաչել, իսկ միւսին ստիպել անխա աշխատել:

Միատեսակ չափ և միանման վերաբերմունք պէտք է ունենաս դէպի բուռը, թէ մնձեցը և թէ փոքրեցը, թէ զուրեկանները և անդուրեկանները; Միատեսակ պարգեց պիտի տաս միատեսակ յաջող զործի համար,

II.

Քնիանուր պահանջներ

Դու գիտես, որ սպան եր կոչումով և գիրքով պատասխանատու անձնաւորութիւն է: Այդ պատասխանատութիւնը հետեանք է այն ընդհանուր պահանջների, որ Հայունսիքը և ծառայութիւնը դըրել են նրա վրայ:

Այդ պահանջները հետեւալներն են:

1. Սպայից պահանջում է օրինակելի վերաբերմունք դէպի իր ծառայութեան գործը:

Սպան պ սրտականութիւն ունի հսկելու երես ենթակայ զինուորների պարտաճանաչ վերաբերմունքին դէպի գործը եւ որպէսզի սպան կարողանայ կատարել իր այդ պարտականութիւնը, ամենից առաջ նա ենքը պէտք է լինի խիստ պարտաճանաչ:

Ոչ մի ը ան այնպէս չի համոզում մարդկանց, ենչպէս անձնական օրինաւոր: Այդ պատճառով էլ դու պէտք է օրինակ լինես ըս զինուորներին ամեն տհակետից:

Ամենից վազ դու պէտք է գաս ծառայութեան և ամենից ուշ դու պէտք է հեռանաս:

Ամեն բան ուրեշներից աւելի լաւ իմացիր և կարողացիր ամեն բան ուրիշներից լաւ կատարել:

Մի մոռանայ, որ քո պարտականութիւնը ու միայն գիտենալ և կատարելն է, այլ և դու պէտք է կարողանաս քո զիտեցածը ուրիշներին հաղորդել, այդ պատճառով և պէտք է սովորես թէ ինչպէս

Միակերպ պատիժը պիտի տաս միւնքն յանցանքը զործողներին, առանց նայելու նրանց ովլինելուն:

3. Սպայից պահանջւում է հոգատար լինելիր զինւուների հկամավը:

Սոսկականը կարող է հոգ տանել միայն իր համար իսկ իշխանաւորը պարտկան է հոգատարը լինել իրեն բանձնուած բոլոր զինւուների համար:

Սպան իրաւունք չունի փափուկ և տաք անկեւ նուում պահեւել, մինչեւ որ ըը համոզւի, թէ իր բոլոր զինւուները տեղաւորեւել են ծածկի տակ: Իրաւունք չունի հաց ուտելու, մինչեւ որ համոզւի, թէ որ զինւուներն ել ուտելու ըան ունեն:

4. Սպայից պահանջւում է հրամայելու ընդունակութիւն ունենալ:

Սպան իր զինւուների իշխանաւորն է և պէտք է կարողանայ այնպէս հրամայել, որ լսեն և կատարեն: Դրա համար անհրաժեշտ է, որ դու ինքո օրինակ տաս քո զինւուներին, անխօս և աշեղ կերպով կատարելով քո բարձր իշխանաւորից ստացած ըստա մասները.

Ստանալուն պէս անմիջապէս ի կատար ածիր և արդ մասին տեղեկագրիր:

Եթէ անհնար կամ դժւար կը լինի այդ հրամանի իրագործումը — կաշւից էլ դուրս պէտք է զաս, բայց պէտք է կատարեն:

Հրամաններ տալիս պէտք է հետեւս, որ բացարձակապէս անիրագործելի հրամաններ չը տաս և չը պահանջես քո ստորագրեալից այն, ինչ որ դու էլ անկարող ես անել:

Հրամանը աւալուց հետոյ ոչ մի դէպքում չէ կարելի փոփոխել կտմ ետ վերցնել հրամանը, եթէ նոր հանգամանքներ տատջ չեն եկել:

Աւելի լու է բոլորովին հրաման չը տալ, քան եթէ տալուց յետոյ փոխել կամ չեղած յայտարարել: Դրա համար նախապէս պէտք է մտածել և յետոյ հրամայել:

Ինչ որ էլ լինի, Գու պիտի պահանջես քո հրամանի կատարումը: Պէտք ստուգես, թէ այնպէս է կատարւած, ինչպէս զուես պահանջել, և ոչ մի անգամ առանց պատիքի չը պիտի թողնես այն զինւորիդ, որ հրամանդ չէ կատարել:

Հրամանները տալուց, յետոյհամոզւելու համար, թէ հասկացել են քեզ միշտ կրկնել տուր հրամանդ և հետեւիր, որ լաւ ըմբռնեն նմասոր:

5. Սպայից պահանջւում է անհրաժեն ուզմական գիտութիւն:

Երեք բան կայ, որ անկազմակերպ խուժանը գարձնում է զորք — զինւորական արեւստի դիտութիւնը, կազմակերպութիւն և զեկավարութիւնը:

Առանց հրացանի հետ վարելու ձեզ իմանալու չի կարելի ուզմիկ լինել:

Առանց կազմակերպութիւն և կարգապահութիւն չի կարելի զինւոր լինել:

Առանց զօրա շարքի չի կարելի զօրքը զեկավարել:

Այս պատճառով էլ դու պիտի զիտենաս զինքի հետ վարեկելու ձեզ, կարգապահութեան օրէնքները և շարքի ծառայութիւնը:

Բացի ընդհանուր պահանջներից կան և յատուկ ապահանաւոր պահանջներ, որոնք հրամայողական անհրաժետութեամբ նոր պարտականութիւններ են դնում սպայի վրայ:

6. Սպայից պահանջւում է ասպետութիւն:

Ասորեայ կիանքի և ձանապարհորդութիւնն ժա-

մանակ դու պէտք է ուշագիր լինես դէպի շրջապատը և հանդէս բերես բոլոր երկրների սպաներին յատուկ ասպետութիւնը՝ պաշտպան պիտի կանգնես անիրաւցի կերպով ձնչւ ածներին և հալածւածներին, օգոնութիւն պիտի ցոյց տաս թոյլերին և յուսահատւածներին, երբեմն պատահում է, որ քո պաշտօնի և դիրքի հանգամանքով, առանց մեծ ջանք թափիլու, այլ միայն միջամտելով, դու կարող ես շատ վէճերի վերջ տալ և վերականգնել թոյլերի ոտնահարւած իրաւունքները:

Ասպետները միայն հոգեկան բաւականութիւն և պլատոնական հաճոյք պիտի ստանան իրենց ասպետութիւնից, այդ պատճառով և ոչ մի շահախնդրական ձգում դու չես կարող ունենալ, երբ դիմում են քո օգնութեանդ որպէս ասպետի և կամ երբ ենքդ միջամտելու կարիք ես զգում—որպէս ասպետ:

Բայց ասպետական և ոչ մի ձգում դու չը պէտք է ունենաս դեպի թշնամիդ, առանց խղճահարւելու դու պիտի հարւածնես նրան, թուլացնես և ստիպես, որ խոնարհւի քո առաջդ և ընդունէ քո ազգի և պետութեան իրաւունքների անրոնարերիլութիւնը և միայն նրա խոնարհւելուց յետոյ դու կարող ես միայն որոշ վեհանձնութիւն ցոյց տալ զէպի նա, և այդ էլ այն զէպքում, երբ համոզւել ես, որ նա դառել է անվտանգ:

Սյժմ անցնենք սպոյի սովորակոն յատկութիւններին, օգտւելով Եկիցք ի հրատարակած «Անմյտկա ինստրուկտոր» գրքոյկեց:

III.

Խազմական յատկութիւններ

1. Համարձակութիւն.

Համարձակութիւնն է, որ կուի ժամանակ յազթութիւն է բերում:

Համարձակութիւնը բաղկացած է արագութեան, ճնշումի և հարւածի ծանրութիւնից իմացիք, որ այս միջոցներով դու կարող ես ջարդել քանակով քեզնից մի քանի անգամ շատ թշնամուն:

2. Վճռականութիւն.

Կուող սպայի ամենագովելի յատկութիւնն է վը-ճուականութիւնը:

Արագութեամբ ընդունած որոշումներից և հրաժաններից է կախւած լինում գործի յաջողութիւնը:

Կուի ժամանակ անհիմ, բայց վճռականապէս ընդունած որոշումը, անհամեմատ շատ աւելի օգտակար է, քան թէ տատանումները:

3. Յամառութիւն.

Որոշումը ընդունելուց յետոյ յամառութեամբ դիմիր նրա իրագործմանը, և ամեն կերպ ձգտիր, որ ինչ էլ որ լինի, դու հասնես քո ծրագրած նպատակիդ:

Ոչինչ այնպէս կործանարար ազգեցութիւն չէ ունենում, ինչպէս կուի ժամանակ ընդունած վճռների և որոշումների գոփիսութիւնը:

4. Երջանայիցաղութիւն.

Համարձակ լինելով հանդերձ—ոչ մի զէպքում այնպիսի գործերի մի ձեռնարկիր, որոնք առաջուց իսկ անիրազործելի են և անմիտ:

իսկ այն ձեռնարկները, որոնք իրագործելի են և հնարաւոր, աշխատիր այնպէս անել, որ նւազագոյն կորուստներ ունենաս. զբա համար պէտք է կշռես իրական պայմանները, ծագելիք հնարաւորութիւնները և յաջողութեան հասնելու համար անհրաժեշտ վասների և բուն յաջողութեան արժեքը:

5. Կանխատեսութիւն.

Վճռական որոշում ընդունելու և նրան մինչեւ վերջը իրագործելու հետ միատեղ դու պէտք է մտածես յետագայի մասին. „Յետոյ ինչ պիտի անեմ ես, եթէ այդ յաջողւի.“ „Յետոյ ինչ պիտի անեմ եթէ, չը յաջողւի“. Այսպիսի հարցեր տալով քեզ, միշտ էլ իրացիք, թէ ինչ պէտք է անես մօտիկ տպագայում:

6. „Կա-պա-հի“.

Սպայի ռազմական յատկութիւններից է կոխւած և կուեւնելի յաջողութեան գլխաւոր պատճառների՝ կապէ, պահպանութեան և հետո խուզրութեան կազմակերպումը.

ԿԱ.ՊԱ.ՀԵ. անու այն կախարդական խօսքը՝ որ յաղթութիւն է տալիս քանակավ աննշան բանակներին՝ թշնամու մեծաքանակ ուժերի զէմ:

Եւ ամեն անգամ, երբ իրար զէմ կուող հաւասար քանակութեամբ ուժերից մէկն ու մէկը պարտում է, և շանսակում է, որ պարտածի մէջ թոյլ է եղել ԿԱ.ՊԱ.ՀԵ.—ն կամ նրանցից մէկն ու մէկը.

Առանց գրանց անկարելի է յաջողութիւն յուսալ:

Առանց կապի դու չես կարող իմանալ, թէ ինչ են անում քո հարեանները քեզ ենթակայ զօրախմբերը, որոնց զեկավարութիւնը տուանց կապի դուրս կը գայ ձեռքից:

Առանց պահպանութեան դու քեզ յանձնում ես թշնամուն, և ամեն վայրեան կարող ես ըրջապատել, անոպանելի յարձակման ենթարկել և փախուստի դիմել:

Առանց հետո խուզրութեան դու նմանւում ես տեսողութիւնից զուրկ մարդու, տուաջ ես շարժում կոյրի պէս և ամեն վայրեան կարող ես անդունդը գլուխել, թշնամու քեզ համար անակնկալ համազարկ ները ճաշակել:

Այդ պատճառով և լաւ յիշեր՝ թէ կուի ժամանակ, թէ արշաւի միջոցին, թէ կանգնած հանգըստանալիս և բարձրներ փորելիս, ամենից առաջ աշխատիր քո կողմույժ կապ հաստատել, պահպանութիւնը կարգի ըերել և հետախոյզներ ուղարկել, և միաժամանակ անտարբեր մի գտնւի և թշնամու կապը խզեր, նրա պահպանութիւնը ոշնչացրու և նրա հետախոյզների ձանապարհը վակիքր.

Մի՛ հանգստանա, մինչեւ որ չես կատարի այս քուլութ:

Եւ երբ այսպէս վաստի՛ս, երբէք պարտութիւն չես կրի:

Եւ զբա համար ամեն մի սպայ մտքի մէջ պիտի ունենա կապահին կապահական խօսքը:

IV

Հայրենախիրութիւն:

Ըստհանուր պահանջների և ռազմական յատկութիւնների թագն ու պսակն է հայրենախիրութիւնը:

Հայ սպայից պահանջում է մեծ հայրենը սիրութիւն և նո պէտք է ունենալ այդ, որովհետեւ առանց գրան նա չի կարող ազնւութեամբ և անկեղծութեամբ ժառանգել իր գործին:

Հայրենասակիրութիւնը թէն ընածին յատկութիւն է ամեն մարդու մէջ, բայց դաստիարակութիւնը և միջավայրը որոշ գոյն և թափ են տալիս նրան, տարբեր եկրպով են նրան գրսեարում:

Դու գիտես, որ հայրենաս ուութիւնը յատուկ է հայերիս, կազմում է մեր ընութեան և ընաւոր-

ութեան հրամայականը. բայց վերջին տարիներու տեղի ունեցած հոգեկան տարրեթերու մները որոշ զուհու կութիւն և մթազնում են մացրել մի քանիսի սէջ, առաջնցելով բոթ անտարբերութիւն դէպի ապագան... Մենք ըստ պէտք է քաշւենք և պիտի խոստովագնւինք, որ ինչպէս «Երուսաղէմում չներ», այնպէս էլ հայերիս մէջ հայենասիրութիւնից զուրի անհատներ կան նրանք կուրօնին եղբայրանում են մեր ցնզել գաճինների հետ և չեն աենուած. թէ ինչպէս թշնամին շահագործում է նրանց, Ակումնրանց հոգին.

Դու պիտի իմանաս, հայ սպայ, որ կան այսպիսի տխուր բացառութիւններ և զգոյշ պէտք է լինեած զգոյշ պէտք է լինես ոչ թէ քեզ համար, այլ և քեզ յանձնւած զինւորների համար, ինչպէս առացի գու պատասխանատու, ես նրանց համար. զու պէտք է հատկես, որ չար սրովներ ըստ բռունեն քո վաշտում. զու պէտք զատես առանձնացես այնպիսի վատերին որոնք պատորում են քո զինւորների հայրենասիրութեան պայծառ զիտակցութիւնը. Նրեմն մի ճառկատագրական վայրկեանում, երբ ամեն բան կախւած է քեզ յանձնւած զինւորների միահամուռ ուժով գին հարւածից, և յանկարծ կասկածն ու անտարբերութիւնն է ծնւռում նրանց մէջ, անասնական վախն է յաղթանակում, նպատակն չքանում է և նրա տեղ բռնում է անտարբերութիւնը ահա այսպիսի ժամանակ գալիս է խայտառակ և ամօթալի պարտութիւնը...

Աւոյ որքան տւած է, այնքան էլ պահոն չւուռում է և նթէ շատ խստագաւանջ չի կարելի լինել զէպի անուս զինւորը, որ էնքան էլ ծանօթ չէ մեր անցեալին և մեր իգեալին, բոյց մենչեւ իսկ բծախնդրութիւն չափ խստապահանջ պէտք է լինել զէպի սպան, որ զինւորից բարձր է իր կրթական մակարդակով և մեր հղէալիների ժամանութիւնը...

Դու պիտի ներշնչ չւած լինես բուռն հայրենամբութեամբ, անդաւաճան հաւատաբրմաթեամբ զէպի քո ժողովրդի գործը. դու պիտի ընդունակ լինես քո այդ հայրենասիրութեամբ և հաւատաբրմաթեամբ զարակելու և քո զինւորներին և քո շուրջ գտանածներին. այդ ժամանակ հերոսութիւնը ինքն իրեն է գալիս. մահը արհամարհող մի սիսկ, թևերի խեղախ թափահարում բաւական է ոգեսրութեան բարձր տրամադրութիւն ստեղծելու և հրաշըներ զսրծելու, բորբոքելով զինւորներից թագնւած հայրենասիրութիւնը:

Եթէ զու զգում հս, որ հայրենասիրութիւնը քո մէջ թմրած է, եթէ զու չես ոգեսրում մեր ազգային իշեալով և կանգնած չես մեր հանրապետութեան անկախութեան տեսակէտի վրայ—դու պարտական ես անկեղծութեամբ զիկուցել քո մեծաւորին, որ չես կարող շարունակել քո ծառայութիւնը և խնդրում հս ազատ արձակել. Եթէ այդ բանը չես անում—և միայն ոռնիկ ստանալու և կուշտ ազրելու համար չես ուզում զրկւել հացից, զու ամենամեծ անբարոյականն էս, զու ծախում հս քո համոզումները և խիզը, զառնում հս վաճառաքի առարկայ մի խղճուկ հոգի, որ վազում է այնտեղ, ուր վճարում են...

Այժմհան անցողական շրջանում մենք դեռ չենք կարողացել ազատագրել մօտիկ անցեալի սպանիչ յիշողութիւններից. մեր մէջ կան գեռ մարդիկ, որ այդ անցածի երազներն են փայփայում...

Հայաստանի հանրապետական բանակի սպայ, քո շրջանում չը պէտք է լինեն այդպիսիները. զու բիւրեղացած հայրենասիրութիւն պիտի լինես, ներիւած հանրապետութեան պահպանութեան և նրա ամրապնդան զորձին,

Թէ խաղաղ ժամանակ և թէ կռւի միջոցին, թէ ժառայութիւնից դուրս և թէ ծառայութեան մէջ դու միշտ պիտի յիշես, թէ բացի այն, որ սպայ ևս և քեզ յանձնւած զինւորների դիկավարն ես, այլ և հայրենասէր և կրթւած հայ ես, այդ պատճառով և ամեն ժամանակ և ամեն տեղ դու պէտք է աշխատես քո զինւորների զիտակցութիւնը բարձրացնել, ամենօրեա զրոյցներով նրանց հասկացնել մեր ժողովրդի ազատ ապրելու և անկաշկանդ զարգանալու հնարաւորութիւնը, արեի տակ իր բունը շնորհու իրաւունքը:

Դու պէտք է հասկացնես նրան մեր հանրապետութեան նշանակութիւնը մեզ համար: Ինչ առաւելութիւններ ունի ուամփարական և ժողովրդապետական հիմունքներով համայնական կեանք ստեղծելը պետական միւս կարգերի համեմատութեամբ և ամեն մէկ քաղաքացու պարտականութիւններն իրաւունքները այս ուամփարական հանրապետութեան հանգէպ:

Մի մոռանա, որ զինւորն էլ քաղաքացի է, և զու՝ գիտակից հայրենասէր և զիտակից քաղաքացի ես:

ՏԱՐ-ՀՅՈՒ

1006

1006

Վապայի կամքի դատիարակութիւնը

Սպայի ու ազմական յատկութիւնները գլխաւորապէս կախւած են նրա կամքի զատիարակութիւնից:

Բիչ է ասել, թէ այս ինչ սպան անկեղծօրէն ցանկանում է կարգապահ, համարձակ, վճռական և յամառ լինել:

Պէտք է կարողանալ և այդ ցանկութիւնը մարմացնել, նրանից շօշափելի հետեանքնը առաջացնել, ցոյց տալ և տահել.

— Ահա, ես ցանկացայ այս ինչ բանը և կարողացայ կատարել:

Այս „կատարել կարողանալը“ մեծապէս կախում ունի մարդուս կամքից, ոյն մարդը, որ սիր կամքի տէրը չէ“, որքան էլ զեղեցիկ և իրա համար օգտակար ցանկութիւններ ունենայ, չը պիտի կարողանայ դըրանը իրագործել, որովհետո ինքը իր տէրը չէ“, “իր խօսքը իր գործին չի բռնում”:

Մարդուս կամքը գաստիարակում է շրջապատի ազգեցութեան տակ:

Այդ պատճառով էլ սպայի կարգապահութիւնը, հանգստութիւնը, իրեն պահելու ընդունակութիւնը, համարձակութիւնը, վճռականութիւնը, յամառութիւնը և այն, այս բոլորը հետմանք են սպայի մինչև զինւորական ծառայութեան մէջ ընկածութելը ստացած կրթութեան և գաստիարակութեան, նոյնական զինւորական ծառայութեան վայրէն լինելը յիշոյ իր շրջապատի ազգեցութեան:

Անգան

Պубличная Библиотека

Մինչև զինւորական ծառայութեան մտնելը մէկ սպայ կարող է զուրկ լինել վերեւում յիշւած յատկութիւններից և բնաւորութեան գծերից, բայց բանակի մէջ ընդունելուց և սպայի կոչում ստանալուց յետոյ նա կարող է ձեռք բերել այդ յատկութիւնները՝ իր կամքի վրայ ոյժ գործ գնելով։

Կռագապահուրեան մարդու ընտելանում է իրեն սովորեցնելով անտրտունջ կերպով կատարելու ծառայութեան բոլոր պահանջները։

Բերենք մի քանի օրինակներ։

Առաւոտեան կանուխ գու պէտք է զուրս զատ ծառայութեան. բայց բունդ չես առել և տաք անկօղնից չես ուզում գուրս գալ. Բնականօրէն քո մէջ ծրնունդ է առնում տրտունջ, թէ օհնչու են այսպէս կանուխ սկսում, չի կարելի արդեօք մի ժամ ուշ սկսել։

Բայց գու ամիջապէս պէտք է տէր կանզնես քո կամքին և առանց տրտունջի պիտի կատարես, որովհետի այդպէս է ընդունեած, ընդունեած է համաձայն հաւաքական լիելքի թելազրութեան, հաւաքական փորձի հիման վրայ. նշանակում է ուրեմն այդպէս լաւ է, և այդպէս պէտք է անել։

Կամ թէ քո իշխանաւորը նկատողութիւն է առնում քեզ: Դու քեզ արդար ես համարում և դարձեալ ընականօրէն քո մէջ ծնունդ է առնում զժգոհութիւնը, գու ցանկանում ես առարկել. Բայց տէր կանզնիր գու քեզ և ամսնուր սեղմիր շրթունքներդ. „նա ինձանից լաւ գիտէ զործը, ուրեմն նրա ասածի պէս էլ պէտք է անել“։

Հրաման ես ստանում, որի միտքը գու չես ըմբռնում, և համարում ես անհեթեթութիւն. Ենթազըրենք հրամայում են քեզ երկար և յոգնեցնող արշաւանք կատարիլ մի աելից մի ուրիշ տեղ: Նորից զըժգոհութիւն և տրտունջ։

— ի՞նչ բան է, նրանք նստած են զտարների մէջ և խաղ են անում— մեղ մի տեղից մի ուրիշ չտեղ են զցում, ինչու համար։

Բայց դու դարձեալ անխնա կերպով պէտք է ձնչես քո մէջ ծնունդ առած դժգոհութիւնը և անխօս կերպով պիտի կատարիս. չէ որ դու չը գիտես ընդհանուր գրութիւնը. պարզ է ուրեմն, որ այդ արշաւանքը անհրաժեշտ է— և պէտք է անշեղ կերպով ի կատար ածել։

Ահա այսպիսով դու պէտք է վարժեցնես քեզ մինչի այն աստիճան, որ նոր հրամաններ ստանալու գէպօրում գու քո վաշտով պատրաստ լինես իրադորձելու այդ, թէկուզ քեզ հրանայած լինեն դիմել զէպի կործանում. քո մէջ պէտք է ուժեղ լինի այն գիտակցութիւնը, թէ ոիշխանաւորի հրամանը հետապնդում է ընդհանուրի օգուար, որի համար մեծ ք պէտք է զոհենք մեզ, ուրեմն և միշտ մահը անհրաժեշտութիւն է։

Դու պէտք է պարզօրէն գիտակցես և միշտ պիտի այշիս, որ քո ստորագրեալներիդ ներկայութիւնը չը պէտք է ըննազատիս և պարսուիս քո իշխանաւորի հրամանները և կառգադութիւնները։

Դրանով հիմքից իսխատում է ամեն տեսակի կարգապահութիւն, իշխանաւորի հեղինակութիւնը ընկնում է, և զինւորների միջից վերանում է վատանութիւնը և հաւատը առնասարակ գէպի իշխանաւորը։

Հին ոռւսակոն բանակը քայլքայւեց շնորհիւ այն բանի, որ անդաստիարակի ած կրտսեր սպայութիւնը զինւորների առաջ քննադատում, ծաղրում և արտաւոր էր զուրս բերում աւագ սպայութեան հրամանները. Ճիշտ է, ոռւսական այդ բանակում կային շատ անարժան զօրավարներ, որոնց հետ և արժանաւորներ-

ներն էլ զրկուում էին զինւորների յարգանքից և հաւատից: Այդ եղաւ և ոռւսական զօրքի քայլայման պատճառը:

Բայց մեզ մօտ այդպէս չէ: մեր զօրքի գլուխ կանգնած են այնպիսի մարդիկ, որոնք անբասիր հայրենասէրներ են և իրենց անցեալով վկայեալ ժողովրդասիրներ են, այդ պատճառով և զու, հայ սպայ, սրբութեամբ պէտք է կսոարես նրանց բոլոր հրամանները և հոահանգները:

Համարձակուրիւնը քաջութեան նախագայմանն է. քաջութիւնն էլ հերոսութիւն է առաջացնում:

Թէ նսպօլէնը ասել էր, թէ «Հերոսները չեն դաստիարակուում, այլ նրանք հերոս են ծնւռում», բայց և այնպէս մենք գիտենք այն մեծ աղդեցութիւնը, որ միջավայրը և դաստիարակութիւնը թողնում են մասզուս վրայ. սովորեցնում են նրան առանց վախի և գողի ընդառաջ գնալ մեծագոյն վըտ սնդներին: Դա համարձակութեան հետեւանքն է:

Պէտք է ամուր մեխել ուղեղի մէջ այն միտքը, որ կուռում մէկի մեռնելու դէպրում օգտառում է Հայրենիքի գործը, պարտւում է թշնամին: Խ՞ոչ արժէ ամեն մէկիս անցողական կեանքը համեմատած մեն հարազատ ժրգովրդի և հայրենի հողի պաշտպանութեան և սղազ զարգացման հեռանկարի հետ. և միթէ՝ մենք ուրախութեամբ մեր կեանքը չը պիտի տանք ապագայ այդ հեռանկարի իրագործման և մեր յաղթանակի համար:

Ահա այսպիսի մտորում մեր պէտք է ունենաս զու, հայ սպայ, և վստահ եղիր, որ քեզանքից անցայտ կը մնայ, թէ ինչպէս զու մի օր կը հերոսանաւ:

Վ, ճռական ութիւնը ձեռք է բերում և քնարութեան գիծ է դառնում մանր և անշան խնդիրներ լուծելիս:

Դու պէտք է սախակես և հարկադրես քեզ արագ և լերջնական որոշումներ կայացնելու ամեն տեղ և ամեն տեսակի հանգամանքներում:

Տատանումները և երկար «Ճանը ու թեթե» անելը միայն միսս կը բերէ՝ ժամանակը ձեռքից կերպար:

Ննթագընը թէ քո վաշտի վերական զեկուացւմ է քեզ.

—Պ օրոն վաշտապետ, վաշտը պէտք է հրացանաները մարտեւով զբացի, բայ ո իւզ գեա չենք ստացել, ինչ անհնգ:

Կամ թէ՝

—Այս տեղը, ուր պիտի լինէր թշնամին, չէ հրեում, ինչ անենք —

Եւ դու պէտք է հարկադրես քեզ արագ և վէճաւական որոշումներ կայացնել և հրացաններ տալ, առանց երերումների և տատանումների:

Ուղղմական որոշումների վճռականութեան վարժւելու համար շատ օգտակար է լինում հմուտ ռազմագիտների ղեկավարութեամբ քարտէզներով տարտիկական խնդիրներ լուծելը. այդ պատճառով էլ պէտք է գորանցով յաճախակի զբազւել և ոչ թէ մատների արանքով նայել: և կարծել, թէ դադարկ Փամանց է միայն:

Պ օրտաճանաչութիւնը և յամառութիւնը ձնաք է բերում յանձն առած պարտականութիւնների և ընդունած որոշումների մշտական և անշեղ իրագործում:

Միայն ձեի և ցոյցի համար չէ, որ դու պէտք կատարես քո յանձն առած պարտականութիւնները:

Բառերով և խօսքերով չի կարելի ծածկել այն քայլը, որ գործով միայն պիտի լիցնել:

Յամառութիւնը քո մէջ զարգացնելու համար

դու պէտք է խիստ ծշանութիւն գործ դնես քո
անձեղ վերաբերմամբ:

Ենթազենք՝ դու շատ յոգնած ես արշաւան-
քեց և անքուն գիշերներեց յետոյ. այսպիսի վիճակում
դու օր վաշտով գտնուում ես առաջապահ ղերերում.
գալիս է քո օգնականը և զեկուցում է, որ զիշե-
րային պահակները նշանակել է և ուզարկել: Քո օգ-
նականը շատ գործունեա և բարեխիզմ մարդ է. դու
նրան պիտի հաւատաս: Բայց քո պարտականութիւնն
է անձամբ սոուզել գիշերային պահակնորը, և դու
պէտք է այդ անես: Ինչքան ծանր լինի այդ քեզ
համար, ինչքան էլ յոգնած լինես և չուզենաս զնաւ-
համարելով այդ աւելորդ բան, բայց և այնպէս— վէր
կաց, յաղթահարեր ամեն բան և գնա:

Կամ թէ:

Դու քո զինւորներով պառկած ես զօրաշղթայի
մէջ, թշնամու կրակի տակ. քո զինւորները իրամիեր
են փորում. առանձին անհրաժեշտութիւն չը կայ, որ
դու մնաս շղթայի մէջ. դու պէտք է միայն հետեւ
շղթայի աշխատանքներին. այդ բանը դու կարող էիք
անել և հեռաց— ապահով տեղից. և դու բնականորէս
ցանկանում ես հո քաշւել. այդ բանը չէր լինի ծա-
ռայութիւն թախտում.— բայց դու չը պէտք է անես
այդ:

Կուիր ինքդ քեզ հետ և մնա զինւորներիդ մօ-
տիկ. ոչ մի վայրկան մի խուսափի աշխատանքից և
վատանդից:

Պարտաճանաշութիւնը և յամառութիւնն են, որ
ուրիշների աշխում մարդուս դարձնում են հեղինակա-
ւոր. դրանով է, որ դու պիտի կարողանաս ազդեցու-
թիւն ձեռք բնրել և պատկառանք ազդիլ քո զինւոր-
ներիդ:

Աւրիշների վրայ ազդեցութիւն ունենալն է, որ
ամենից կարեորն է ուազմական կեանքում: Եւ բոլոր
մեծանուն հրամանատարները ունեցել են այդ ազդե-
ցութիւնը:

Ահա ամենափայլուն օրինակը— Նապօլէօնը:

Իր ժամանակակից մարդկանցից ամենից լաւ
Նապօլէօնը գիտէր, թէ ինչպէս պէտք է ազգի բազ-
մութեան վրայ. և ամենից շատ նա զիտէր այդ ազ-
դեցութեան արժէքը:

Նապօլէօնը փնտում էր իր զինւորների մէջ
այնպիսներին, որոնք ազդեցիկ էին ընկերների շրջա-
նում և նշանակում էր հրամանատարներ, առանց ի
նկատի առնելու նրա գիտական և սօցիալական պայ-
մանները:

Եւ իսկապէս, իշխանաւոր և հրամանատար կա-
ռող է լինել միայն նա, ով ազդեցիկ է, ով առանց
ոյժի և միայն իր մի խօսքով կարող է իրեն ենթար-
գել շատերին:

Ուրիշների վրայ ազդելու գաղտնիքը հետեւ անք
է մարդուս բնաւորութեան մի քանի գծերի. դրանցից
կարեորն է՝ ինքնավստահութիւնը,[՝] այն հաւատը, որ
դու զիտես, թէ ինչ պէտք է վարւիս, թէ ինչ-
պիսի պայմաններում ինչ պիտի անես. զիտես, թէ
ինչ պիտի սովորեցնես քո ստորագրեաներին և ինչ
պիտի անել տաս նրանց:

Ալզպիսով դու տեսնում ես, որ ինքնավստահու-
թիւնը հիմնում է զիտութեան, զիտենալու վրայ. այդ
պատճառով և անհրաժեշտ է, որ ազդեցութիւն ձեռք
բնրելու համար սպան ծանօթ լինի ուազմական բոլոր
զիտութիւններին:

Այն սպան, որ հիմնաւորապէս ծանօթ չէ ուազ-
մական բոլոր զիտութիւններին նա ոչ մի բանի պէտք

չէ. նա չի կարող ազգեցիկ լինել և իր հասելից իր պինւորներին տանել. նա չի կարող վստահութիւն ներշնչել իրեն հնթարկւողներին:

Որեէ մէկի ազգեցութեան հնթարկւելու համար անհրաժեշտ է, որ նրան ենթարկւողները բնդունեն այդ մէկի գերազանցութիւնը, պէտք է զիտակցեն, որ նա իրենց մեծն է, և ոչ միայն այն պատճառով, որ նշանակւած է իրենց մեծ, այլ այն պատճառով, որ նա իրենցից աւելի լաւ զիտէ գործը և ամեն մէկից էլ աւելի լաւ կարող է այդ գործը կատարել:

Պէտք է, որ քո զինւորները ասեն քո մասին.

— Նա ամեն բան զիտէ, նա ամեն բան կարող է բացատրել, նա ամեն ինչ կարող է մեզնից ամեն մէկից աւելի լաւ կատարել. Մենք ուր, նա ուր...

Եթէ զինւորները այդպէս չեն ասում, ուրեմն նրանց սպան բանի պէտք չէ և ոչ մի հեղինակութիւն չի կարող ունենալ:

Եւ դու պէտք է ամեն կերպ աշխատես, որ քո զինւորները այդպէս խօսեն քո մասին.

Իրա համար ամեն ժամանակ դու պիտի ապացուցիս, որ քո բոլոր պահանջածները զինւորներիցդ, ինքդ էլ կարող ես կատարել:

Այդ ժամանակ ինքնըստինքեան քո մէջ ամուր կը լինի ինքնավստահութիւնը և դու բնականորէն զեկավարող կը լինես քո զինւորների շրջանում,

Բայց յիշեր, որ այն վայրկեանից դու կարող ես կորցնել քո ունեցած ամբողջ ազգեցութիւնը, երբ կը դառնաս ծիծազելի:

Այն մարդը, որ ծաղրի ու ծանակի առարկայ է, նա արդէն չի կարող ազգեցիկ լինել:

Զգուշացիս ծիծազելի գառն ոլուց, մի ձեռնարկի այնպիսի գործերի, որոնք քո ուժերից վեր են. ծայրայեղութիւններից և չափազանցութիւններից հեռու եղիր:

Աւրիշների վրայ ազգելու համար անհրաժեշտ է և մեծ համբերութիւն և հաստատակամութիւն ցոյց տալ:

Ենթագրենք դու մի ինչ որ բան ես բացատրում քո զինւորներին. բացատրում ես մի քանի անգամ նա չի հասկանում: Դու ձեռքդ թափ ես տալիս «է՛, մայաէ գլուխ»—ասում և հեռանում: Բայց այդպէս չի կարելի վարւել. դու պարտական ես համբերու. թեամբ տսաւըսան անգամ բացատրել նոր—նոր ձեռքով, նոր խօսքեցով, ուրիշ «հանգի» մինչև որ զինւորդ պիտի չի ընկնի և լաւ չի հասկանա: Դու ըը պիտի հեռ անսո, մընչև որ ինքդ չը համոզւես, որ զինւորդ հասկացի է քեզ:

Այստեղ դու պէտք է զիտենաս, որ զինւորիդ չսփ մեղաւոր ես և դու, ով չես կարող նրան բան հասկացնել. դու պիտի իմանաս հասկացնելու, համոզելու ձեր զինւորի լեզով նրա հետ խօսելու հմտութիւնը: Դու պէտք է լաւ ուսումնասիրիս քո զինւորներին, ժանօթ պէտք է լինես նրանց իւրաքանչիւրի անհատական առանձնայտակութիւններին:

Բոլոր զինւորները իրար նման չեն. նրանցից ամեն մէկը մի մօք զաւակ է, տարբեր գիւղերից, իրարից տարբեր բառբաններով և մաշխարհով:

Քողաքում մեծացած զինւորի հետ դու բոլորզին ուրիշ լեզով պիտի խօսես, իսկ գիւղացի ռանցպար զինւորի հետ ջոկ լեզով պիտի խօսես:

Դու պէտք է այնպէս անես, որ քո բոլոր զինւորներդ քեզ հասկանան:

Կամ թէ՝

Դաշտային մարզանքի է դուրս եկել վաշտդ. դու մօտենում ես և ցոյց ես տալիս, թէ այս ինչ վարժութիւնը ինչպէս պէտք է անել. բայց երբ հեռանում ես—զինւորներդ նորից „իրենց էշն են քշում“.— դու կարող ես չը տեսնելու տալ և մտածել:

— «Զանգամին, ես խօ չեմ կարող ամեն վայրկեան նրանց զլսին կանգնել»:

Սյսպէս էին անում հին ոռուական սպաները. բայց դու այդպէս չը պէտք է անհա. եթէ այդպէս անես՝ քո ձեռքից կը գնայ վաշտ, դու կը կորցնես քո ազգեցութիւնը.

Իսկոյն պիտի վերադառնաս, նորից ցոյց տասր սառնասիրութեամբ նորից հսկացնես, և մինչեւ որ նրանք չը կատարեն քո ասածները՝ չը պիտի հեռանաս:

Այդպիսով զինւորների մէջ դու այն միտքը պէտք է ստեղծես, որ անհնար է չը կատարել քո հրամանները էզ, չի կարելի հէնց այնպէս, „եօլա“ գնալու և ձևի համար մատների արանքով նայել ծառայութեան պահանջներին:

Ազգեցութիւն ունենալու համար պահանջում և անհող մնալու պահութիւն և անտչառութիւն:

Դու ոչ մի խտրութիւն չը պիտի դնես քո զինւորների մէջ. նրանք բոլորն էլ քեզ համար հաւասար են, և դու միանման վերաբերմունք պիտի ցոյց տաս նրանց՝ «խնամիներ» և սիրելիներ զտներ վ դու կարող ես միտյն վարկարեկել քեզ:

Վայն եկել է քեզ, եթէ քո զինւորները կասեն, — Հա, ինչու Սարգսեանին կարելի է, նրան պատիժ չկայ իսկ մեղղկայ..

Դու պէտք է անաշաս լինես և պէտք է աշխատես, որ քո զինւորներդ ասեն քո մտոին:

—Մեր վաշտապետը արդար մարդ է. ամենքիս է մի աչքով է նայում:

Եւ այդպէս մտածելով քո զինւորները կը համոզւեն, որ քո պահանջները բխում են անհրաժեշտութիւնից, ուրիշն և պէտք է իրագործել:

Ուրիշների վրայ ազգեցութիւն ունենալու համար հարկաւոր է որ, իգուր տեղը դատարկ խօսքիր ու սպառնալիքներ դուրս չը թոշին քու բերանից:

Դու քո նուօրի տէրը պէտք է լինես և եթէ գոփում ես զինւորիդ, և պարզի ես խոստանում, ուրեմն պէտք է պարզեիս. եթէ բարկացել ես և սպառնացել ես պատժել, ուրեմն պատժեր և առանց խնայելու:

Մանաւանդ կույների ժամանակ անհրաժեշտ է, որ դու քո ազգեցութեան տակ պահես զինւորներիդ և քո անձնական օրինակով ցոյց տաս նրանց ռազմական կարողութիւններից: Կուի ժամանակ դու պիտի լինես ամենավտանգալոր տեղերում, զինւորներիդ կողքին և միշտ հանգիստ, միշտ ուրախ (կուի ժամանակ աւելի հեշտ է ուրախ լինել, քան սառնասիրու և հանգիստ):

Մի քանի անգամ գիտմամբ դու ցոյց պիտի տասը զինւորներին, որ չիս վախինում թշնամու գնդակից. և երբ կը լսես, որ զինւորներդ խրամների մէջ ասում են, ըստ մասին:

—Մեր վաշտապետը ինչպէս սրտու է, սատանից էլ չի վախինում. թշնամու գնդակները կարկտի պէս թափուում են, իսկ նա կարծես թէ ոչինչ չը կայ, հանգիստ հստած հեռազբակով նրանց է նայում—և հէջ պէտքն էլ չէ...

Սյս գէպը դու կարող ես վճտան լինել, որ զինւորներդ քեզ կը լսեն:

Վերջացնելու հասար այն բոլոր անհրաժեշտ զը-

ծերը, որոնց շնորհեւ դու կարող ես ազդեցութիւն ձեռք բերել, ես պէտք է յիշեմ և մի վերջին գիծ. այդ այն է, որ դու պէտք է՝ լինես անբասիր մաքուր մարդ և զինւորներդ քեզ պէտք է յարգեն ոչ միայն որպէս իշխանաւորի, այլ և որպէս մարդու:

Դու չը պիտի լինես հարբեցող, խումարքազ, գող, թալանչի, խառնակիչ և խայտառակիչ, դու չես կարող լինել ժողովրդական հարստութիւնները վատնող. այզպիսով դու ոչ մի ազգեցութիւն չես կարող ունենալ: Դու պէտք է ազնիւ մարդ լինես...

Բայց այդ մասին երկար խօսելու կարիք չը կայ, որովհետեւ միայն այն փաստը, որ դու Հայրենիքը պաշտպանող բանակի մէջ, ես այդ նշանակում է, որ մտքուր և ազնիւ մարդ ես:

Մեր բանակը ծառալում է մեր տանջւած ազգի և երկրի ազատազրման վեհ գործին—և պէտք է, որ նրա բոլոր սպաները ներշնչւած լինեն այդ գաղափարով և մաքուր ձեռքեր ունենան:

Այսպիսով դու տեսնում ես, ճայ բանակի սպայ, որ ցանկութեան դէպքում, դու կարող ես քո կամքե կը դառնալ:

Եւ երբ մենակ, ինք քեզ այս մասին մտածես կը ահսնես, որ այնքան էլ դժւար չէ խօսքը գործ դարձնել:

ԵՐԵՅ

Վ. Ե Ր Զ Ա. Բ Ա. Ն

Հայ բանակի սպայ:

Քիզնից է կախւած քո հարազատ ժաղովուդիդ և հայրենիքիդ բաղպար:

Դու միայն կարող ես պաշտպանել քո պապինական օջախիը դրսի մեր թշնամիներից, որունք մեր իսպառ բնաջնջումն են ցանկանում:

Դու միայն կարող ես քո ետնից տանել հայրենասիրութեամբ համակւած զինւորներիդ, դարձնելով նրանց անձնւիրութեան և հերոսութեան մարմնացումն, վառ պահելով նրանց մէջ մեր հայրենիքի արեստ և ծաղկուն տպագայի յոյնը,

Դու միայն կարող ես ամբազնիկ և ուժեղացնել մեր ազգային բանակը, որովհետեւ դու ես այդ բանակի ողին, նրա սիրաը, հրամայողը:

Քիզնից է կախւած քո զինւորների վարքը և բարքը:

Ուրեմն՝ գործի անցիր և դաստիարակիր քո զինւորներին, դաստիարակիր ինքդ քիզ.

Կազմակերպի՛՛ Հայաստանի Բանակը առողջ հիմունքների վրայ:

«ՈՎԱԶՄԻԿԻ» ԳՐԱԴԱՐԱՆ

Լոյս են Տեսակ հետեւեալ գրքն ի ները

1. Գաղտնի Փաստաթղթեր 100 ր.
2. Հայ Հերոսներ—Լեզու 200 ր.
3. Ֆելդմարշալ Ֆօշ 150 ր.
4. Հետախոյզ դինուուր 100 ր.
5. Զօրաշղթայի ուսմունք 100 ր.
6. Հայ սպայի համար 100 ր.

Ստանալ կարելի է մայրաքաղաքի գրա-
վաճառանոցներում և «Մազմիկի» խմբա-
գրատանը՝ Երևան, Վալճիկեան փողոց, 13.



2013

«Ազգային գրադարան



NL0048927

